ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- սեպտեմբերի 2023 թվականի №----Ա

«ԷԿՈՎԻԼ» ԵՎ «ՎՈԼՏԱ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԵԼԻՔ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷԿՈՎԻԼ» և «ՎՈԼՏԱ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) 2023 թվականի հուլիսի 31-ի, օգոստոսի 4-ի, օգոստոսի 8-ի գրություններով դիմել են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությունների մասնակից «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկվելիք 5995 հատ (կանոնադրական կապիտալում նախատեսվող չափը՝ 37,4805%) 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամ» հատուկ սահմանափակ ընկերակցությանն օտարելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2023 թվականի օգոստոսի 15-ի №ԳԲ/34.1-Մ4-1/2987-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ Կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 10-ի №02/12.4/30367-2023 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությունների մասնակից «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկվելիք 37,4805% բաժնետոմսերի «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամ» հատուկ սահմանափակ ընկերակցությանն օտարելու գործարքի կնքմանը:
2. Ընկերություններին՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը.
   2) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան

-- սեպտեմբերի 2023թ.